

¶. Πολυη γιατιωρ Σωρείκων	100	ηλ.
Ψευδαμίσιαν „ „	55	„
Φιαιτιανιαν γιατιωρ Σωρείκων	110	„
Ψευδαμίσιαν „ „	60	„
Στέδ ρήγες	2	ηλ.
Σακινιαγιανάν ιπαηγίαντες μεταφατήρι γιατιωρ		
Ξηλ. εκρήκη περιφερειακή γιατιωρ 2 ηλ.		



# ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 23 ԴԵԿԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Վանի մը ժամանակէ ՚ի վեր տի րած քաղաքական անհանդատութիւն ները բաւական ծանր կերպարանք մը կառնուն, եւ թէպէտ տակաւին ոչ կարեւոր եւ յայտնի պատճառ մը, ոչ ալ անմիջական լուծման կարօտ կամ տէրութեանց ատեանը ներկայացած խնդիր մը կայ, որոյ ծայրէն պատերազմ կամ խաղաղութիւն ըլլալիքը հասկցուի, այսու ամենայնիւ ներկայ վիճակին ալ ըստ ինքեան բաւական յըզի է վտանգաւոր հաւանականութիւններով, Այս նկատմանց մէջ ուշադրութեան արժանի է Ուուսիոյ կէս պաշտօնական լրագրաց լեզուն, որ Փարիզի եւ կրնանք ըսելնաեւ Ընտրայի ու Վիէննայի մէջ իր ազդեցութիւնը ցուցուց, Գրեթէ եւրոպական ամեն լրագիրներ ուուսական Խնվալիտ լրագրին հրատարակած մէկ յօդուածին վրայ կ'զբաղին, որ ծանրյայտարարութիւններ կը պարունակէր եւ կը ցուցնէր որ Ուուսիատամաներկու տարիէ ՚ի վեր իր բունածխաղղ դիրքը ձգելով Վիէննայի քաղաքականութիւնը դարձեալ ձեռք առնելու միտք ունի, Խնվալիտ անցեալ տարուան մէջ Խւրոպայի ըրածդեսալանագիտական թղթակցութեանց վրայ խօսելով՝ կը գանգատի արեւմբան մեծ տէրութեանց՝ մանհաւանդղ Գաղղիոյ եւ Վւստրիոյ բռնածքականութենէն, որոց յեղեղուկը ըլլալը կը մեղադրէ. Այս գանգատի մանհաւանդ որ Գեղին Տետրակին մէջ Գաղղիոյ եւ Ուուսիոյ արեւելից նը կատմամբ ժամանակ մ'առաջ որոշած համաձայնութիւնը չէ յիշուեր, ուրիէ ծագած էր չորս տէրութեանց ։ ։ ։ Պրան մատուցած հաւաքական ծանուցադիրը. եւ Գաղղիա այն քաղաքականութիւնն ՚ի բաց թողլով՝ Վւստրիոյ հետ միացեր է, Գերմանիոյ Խտալիոյ եւ Վրեւելից նկատմամբ եղած բոլոր խնդրոց մէջ, կը մէջ Խնվալիտ, Գաղղիա եւ Վւստրիա իրարու մէջ համաձայնած են, եւ այս անխորհեմեւ անընաւական գաշնակցութիւնը՝ հիւսիսային Պրանիոյ զարգացումը կարգեւ, Խտալիոյ միութեան դէմք կը կենայ, Ալաւեան ցեղերուն անկախ զարդացման կը միջամտէ եւ Տաճկառտանի քրիստոնեայները գերբութեանու կը դատապարտէ, Այս ամեն իրնդրոց եւ մանհաւանդ վերջնոյն մէջ Ուուսիա մեծամեծ շահեր ունի, եւ Գաղղիոյ ու Վւստրիոյ համաձայնութիւնն արգելք կը լլայ Ուուսիոյ բնական համակրութեանց, որք ազդայնութեան անկախութեան եւ ազտութեան կը վերաբերին եղեր, Ուստի Խնվալիտ՝ Գաղղիոյ ազդաբարութիւն եւ միանդամայն սպառնալիք կը նէ ըսելով. « Եթէ Գաղղիոյ ներկայ քաղաքականութիւնն ՚ի բաց չթողլուի, հիմակուան դինեալ խաղաղութիւնը

ծանր պատերազմի պիտի դարձնէ՛ : «  
Այս ամեն խօսքերէն կը տեսնուի  
որ Ուռուսիա համապատական քաղաքա-  
կանութիւնը, Ավրիտի գործը եւ Պուլ  
զարիոյ խնդիրն առաջ տանելու պիտի  
աշխատի արեւելեան քրիստոնեայներն  
իրեն առիթ բռնելով, Ավրեւի թէ  
Լուքսէնապուրկի խնդրոյն առթիւ  
Գաղղիոյ նկատմամբ Ուռուսիոյ ցոյց  
տուած գիրքն՝ երկու տէրութեանց  
յարաբերութիւններն իրարու մատե-  
ցուցեր էին, որ Ուռուսիոյ կայսեր Փա-  
րիզ ըրած ուղեւորութեամբ առաւել  
մտերմական կերպարանք ստացաւ :  
Այն ատեն Գաղղիա խօսք տուած էր  
Ավրիտի նկատմամբ եղած հաւաքա-  
կան յայտարարութեան մասնակցիլ .  
բայց անոր մատուցուելէն շատ առաջ  
Գաղղիա՝ անշուշտ նկատելով որ իր  
շահը թէ՛ Արեւելից մէջ եւ թէ՛ ու-  
րիշ տեղեր Ուռուսիոյ կողմը չէր, իր  
քաղաքականութիւնը փոխեց եւ Սալց-  
պուրկի տեսակցութենէն 'ի վեր Աւստ-  
րիոյ կողմն անցաւ՝ Բրուսիոյ եւ Ուռ-  
ուսիոյ փառասիրութեանց եւ Խալիոյ  
ալ Հռոմի վրայ ունեցած դիտառու-  
բութեանց առաջն առնելու համար :

Ուռուսիա այս տեսմելով անշուշտ  
ինք ալ ուրիշներու հետ համաձայնե-  
ցաւ կամ համաձայնելու վրայ է : Ահա  
ասոր համար էր որ Պ. Արմինի՛ Քա-  
մէս Օրէնսդիր ժողովն մէջ կըսէր .  
« Կը յուսամ որ սխալմամբ թոյլ չի  
տրուիր որ Խալիոյ Բրուսիոյ Ուռու-  
սիոյ եւ Միացեալ՝ Ասհանդաց մէջ  
դաշնակցութիւն մը կաղմուի մեզի  
(Գաղղիոյ) գէմ : » Այս սխալն Խալի-  
լիոյ եւ Գերմանիոյ մրութեանց գէմ  
կենալն է, որոց նկատմամբ Գաղղիոյ  
ի՞նչ քաղաքականութիւն բռնելիքը  
մեծ վարանմունք կը պատճառէ : Պ.  
Ուռէի ըրած յայտարարութիւնը թէ  
և երբէք չպիտի թոյլ տրուի Խալիոյ  
որ Հռոմի տիրէն, Խալիոյ մէջ այն-  
պիսի փոթորիկ յարոյց որ տակաւին  
մեղմացած չէ : Գիօրէնցայի խորհըր-  
դարանը տասն նիստէ աւելի նուիրեց  
Հռոմի խնդրոյն, եւ արդիւնքն եղաւ  
դարձեալ Հռոմը մայրաքաղաք հրա-  
տարակել Արեւելակայութեանց այսպէս  
բորբոքած ժամանակ եթէ եւրոպա-  
կան պատերազմ ծագի, անկարելի չէ  
որ Խալիոյ խոհեմութիւնը կորուսա-  
նելով « Գաղղիոյ սրոյն վրայ երթայ  
ի յնայ և ինչպէս որ կըսէր Պ. Թափէր :  
Գերմանիա իր գործը լրութեամբ կը  
տեսնէ եւ խոռվութեան առիթ ըլ-  
լալ չուզեր . բայց Գաղղիոյ եւ Աւստ-  
րիոյ համաձայնութիւնը թերեւս իրա-  
ւամբ Գերմանիոյ մէջ սաստիկ կաս-  
կածներ կը յարուցանէ եւ ազդային  
զդացումը կը բորբոքէ : Անդիա Պէ-  
նիեաննութեան գաղտնի գաւերուն  
գէմ կը մաքառի, եւ թէպէտ Արեւ-  
ելեան խնդրոյն մէջ իր շահը չկընար  
ըքանել, բայց Խըլանտացւոց դժու-  
հութիւնները, Հապէշի պատերազ-  
մը, Միացեալ՝ Ասհանդաց հետ իր  
ունեցած վէճին տակաւին անորոշ մը :

Նալլ բաւական արգելք կը լլան իր  
դործողութեան :

Ասոնցմէ կը տեսնուի որ Ոյուսիա  
կրնայ առիթ մ'ունենալ փորձ մը փոր-  
ձելու . քանզի մէկ կողմանէ արեւմըտ-  
եան տէրութեանց դործողութիւնը զա-  
նալան պատճառներով տկարացած՝ կը  
տեսնէ , եւ միւս կողմանէ ինք ալ նոր  
օժանդակիներ կը գտնէ : Այսպիսի ա-  
ռիթներն ամեն ժամանակ ձեռք չեն  
անցնիր, եւ ուու լրագրաց ձայնը բարձ  
նալուն պատճառը կը հասկցուի: Ոյու-  
սիա՝ մեծ տէրութեանց քով իր ունե-  
ցած դեսպաններն ալ Իեղբասուրկ  
կը կանչէ , հարկաւ իր բռնելիք քա-  
ղաքականութեան վրայ անոնց նոր հը-  
րահանգներ տալու համար, Ալսուիթէ  
Կորչաքով իշխանին տեղ Իկնաթիէվ  
զօրապեսն ալ արտաքին գործոց պաշ-  
տօնեայ պիտի անուանի: Կորչաքով  
իշխանը մեծ ծառայութիւններ մա-  
տուցած է Ոյուսիոյ կայսրութեան եւ  
կայսեր ալ գրեթէ անձնական բարե-  
կամն է . ուրեմն ներկայ պարագայից  
մէջ անոր փոփոխութիւնն ալ եթէ  
ստուգուի, առանց նշանակութեան չի  
կրնար ըլլալ: Դրըմի պատերազմէն ՚ի  
վեր Կորչաքով իշխանը միշտ խաղա-  
ղութեան կուսակից եղած է , մինչ-  
դեռ Իկնաթիէվի համար կը կարծը-  
ւի որ ուուսաց պատերազմասէր մասին  
հետ սերտ յարաբերութիւններ ունի,  
եւ կրնայ ըլլալ որ Աղեքսանդր կայսրն  
ալ , նոր քաղաքական ընթացքի մը  
մէջ , երիտասարդ եւ աղջու քաղա-  
քագէտ մը՝ ծերունի եւ խաղաղասէր  
պաշտօնեայէ մը նախամեծար համա-  
րի:

Եթէ Ոյուսիոյ եւ Արուսիոյ վա-  
ռասիրութիւնն եւ Խառալիոյ անհամշ-  
րերութիւնները Գաղղիոյ հաճելի չեն  
կրնար ըլլալ, Գաղղիոյ եւ Վասարիոյ  
բռնած դիրքն ալ անոնց կասկածի տե-  
ղիք կուտայ : Այս կասկածներն են որ  
հորիզոնն աւելի կը մթագնեն եւ տէ-  
րութեանց զինուորակամն պատրաս-  
տութիւնները կը փութացընեն: Ար-  
դէն ոչ միայն լրագիրներ, այլ եւ Գաղ-  
ղիոյ պատերազմի պաշտօնեայն ալ օ-  
րէնսդիր ժողովին մէջ այնպիսի յայ-  
տարարութիւններ ըրաւ, որոցմէ կը  
հասկցուի որ այս վիճակը չկրնար եր-  
կար տեւել: Այսու ամենայնիւ տա-  
կաւին քան մ'ալ չկայ պատերազմի  
չարագուշակ հետեւութիւններ հա-  
նելու : Հետևային Գերմանիոյ դաշ-  
նակցութիւնը մեծ տէրութիւններէն  
պաշտօնապէս ճանչուեցաւ, եւ Արու-  
սիոյ դեսպաններն իրենց տէրութեան  
նոր տիտղոսովը ներկայացան այս շար-  
թու: Գաղղիոյ եւ Ոյուսիոյ կայսերաց  
եւ Անդղիոյ թագուհուն: Կարօլէսն  
կայսեր եւ Գերմանիոյ դեսպանին  
տեսակցութիւնը խխատ համակրական  
եղեր է : Անհամբերութեամբ կ'սպաս-  
ուէր նաեւ նոր տարուան օրը դես-  
պանաց ընդունելութեան առթիւ Աա-  
րօլէսնի խօսելիք ճառքն , զըր հեռա-  
դիրն այսօր թերեւս ծանուցանէ: Հա-

ւանական է որ Գաղղիոյ կայսը նորէն խաղաղական ապահովութիւններ տայ , ինչպէս որ օրէնադիր ժողովը բանալու առթիւ տուաւ , եւ Եւրոպայի անհանգստութիւնները մեղմէ , որք դարձեալ պօրսաներուն մէջ արժեթուղթերը կոարեցին : Դժբաղդութիւնն այն է որ այսպիսի ապահովութեանց ազդեցութիւնն ալ երկարատեւ չըլլար , եւ անհանգստութիւնները դարձեալ կը վերածնին , ինչպէս որ օրինակներն ասկէ առաջալ տեսնուած են :

Եթէնքէն կը հեռադրեն թէ զ.  
Քումունսուրոսի նախագահութեամբ  
եղած պաշտօնեայք հրաժարական տը-  
ւեր են, եւ թագաւորը Պ. Մօրակ-  
թինիի յանձներ է նոր պաշտօնեու-  
թիւն մը կազմելու գործը :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Քուռիէ ա՞Օթիան լրագիրն անց  
ետլ տարի առաջարկած էր աղբային  
խորհրդաբանն մը կազմել։ Այս անգամ  
Քուռիէ նորէն այս նիւթիս վրայ  
յօդուածներ հրատարակել սկսած է,  
որք թարգմանուելու արժանի են :

“ՄԵԾ ՎՀԱՏՈՒԹԻՒՆ ՄԸ Կը տիւ-  
րէր, կըսէ, ժողովրդեան սրտին մէջ,  
ռայց երբոր ազգային խորհրդարանի  
մը վրայ խօսքեր ելան, ամեն սիրտեր  
յուսով լցուեցան, եւ ՄԻԱՅԻ ՄԵԾ-  
լիսին կազմութիւնն իբրև միակ միջոց  
մը կը համարուի երկրին վերակենդա-  
նութեան. Կառավարութեան եւ օ-  
տար գեւալանադիտութեան ջանքը չի  
լրցաւ Տաճկաստանի գործոց այն  
դարձաւածքը տալ, որ Երեւելից վրայ  
շւրպայի զգացած անհանդատու-  
թիւններն հանդարտելու յարմար ըլ-  
լար. Մեն մարդ կայսրութեան պի-  
տոյից վրայ կը խօսի. հազար խորհըր-  
դականք բարեկարգութիւններ կա-  
ւաջարկեն. կը քննուի, խորհուրդ կը  
հարցուի եւ կը խորհուի, բայց եղած  
աշխատութիւնն ամլութեան դատա-  
պարտեալ կերեւի,

“ Ա Վզգը — եւ այս բառով Առւլ-  
թանին բոլոր հալատակ ժողովուրդներ-  
ը կը նշանակենք առանց ցեղի կամ  
կրօնի խտրութեան — ազգը խիստ շը-  
նորհապարտ է իր պատուցն համար  
ոյց տրուած հոգածութենէն . բայց  
կ'սկսի զդալ թէ իր չարիքը ճանչե-  
ու եւ դարմանները դանելու համար  
աւ կըլլայ որ իրեն ալխորհուրդ հար-  
ցուի : Վառալիսրութեան պակառու-  
թիւնները եւ ժողովրդոց տառապան-  
քը մի առ մի թուելու միտք չունինք .  
այց ամենէն աւելի աչքի զարկած-  
ներուն՝ այն է Աիրիփակ ապստամբու .  
թեան եւ ելումտից դէշ վիճակին վրայ՝  
քանի մը խօսք միայն կըսենք :

“ Եյս ապստամբութիւնը Աիրիփակ  
օրիստոնէից կամ մանաւանդ օտար  
աշղաքականութեան մը զործն է որ  
հուր եւ ստութիւն կը չնչէ ապստամ-





կոչ Գարբիել աղան, Պալեօդեան Յարութիւն աղան, ուսումնական խորհըքէն ալ Արդանեան Ենթանիկ է վէնտին և Խնաջից գլխաւորներէն Ելթունեան Յարութիւն աղան, Ծարն կըրեան Յօհաննէս տղան, Թափէծի Յօհաննէս աղան, Մոմձեան Յարութիւն աղան և հինգ ալ քահանայ և այլք Ա երջապէս շատ խորհելէ ետքը ժողովքին մէջէն Ղալլզպեան Յակոբ աղան ռոք կոխեց որ վանքին մէջէն այդ կասկածելի անձինքն անպատճառ ենին և շուտով վանական խորհուրդ մը հաստատուի, որ վանքը թէ սատկի Հկողմանէ դողութիւններէն աղասի և թէ բարյականութեան դէմ բաները մէկ մ'ալ չըլլան. Եյս խօսքին վրայ ամենքըն ալ հաճութիւն տուին և ըսին որ արդարեւ վանքը մաքրել բարեկարգել և վանական խորհուրդ մ'ալ հաստատել պէտք է. Եշահեան մահաեսի Արել աղան ըստ թէ ասոնք աղեկ են, բայց այդ ըստաներնիդ վաղը կուրանաք. մէկ ես չեմմի, վաղը մնջի հարցընեննէ կուրանամ. ուստի պէտք է. որ չէ թէ միայն այս վանքին, այլ բոլոր վանքերուն բարեկարգութեան կանոն մը շենելու համար ովոր կուզէ ստորագրէ. ասոր ամենն ալ հաճութիւն տալով կ'ստորագրեն:

Նետեղալ օրը որ է 25 օգոստոս  
օր շաբաթ, այս ժողովքին մէջեն տասն  
և հինգ հոգիի չափ անձնիք, երեք քա-  
հանայ և մէկ վարդապետ հետ առնե-  
լով Ա. Խշանի վանքը կերթան ոյդ  
կասկածելի եղած շորս մարդոց սենետիկ  
ները կը գոյցեն և իրենց կը հրամայեն  
որ վանքեն դուրս ենեն, և շատ վե-  
ճաբանութենէ ետև որ և իցէ կեր-  
պիւ դուրս ենելու կը հարկադրեն, և  
ելած տառեննին ամեն մէկուն էշեանե-  
րը կը քննեն. Խվերէկցի Պ. Բարսէ-  
զին քովին կը գտնեն երկու երեք քել-  
է շեքէր, և 20 օսմաննեան լիրա: Խ-  
վերէկցի Պ. Մելքոնին քովին կը գըտ-  
նեն 22 լիրա օսմանցի, 22 չարիզը Պու-  
պիէ, Սահնախը և քսաննոց ոսկիներ և  
ուրիշ մաքուր ստակներ, չինի, զատէհ,  
երկու հօխայի չափ արդար իւղ, հինգ  
վեց քելլէ շեքէր խոշոր, 50—60 տրամի  
չափ արծաթի քիւչէ, սրմա և ուրիշ  
խաչի թագի արծաթի կոտրտուք, քեօ-  
չէկի զել, ֆիսան, գլխու մազ, հիւս-  
սիւրի թէսպիհ և արծաթ դդալ մը,  
թօփով կէղի, շատ մը սպառմաշէթ  
մամ, տուփերով չայ, շատ մը չէվրէ-  
ներ, խավուներ, և այն. Մինակ ըս-  
տակները հաշուեցաւ 4000 դուրուշէն  
աւելի ելան. ասոնք վերոյիշեալ քուի-  
սիօնը գրաւեց, և վարդապետութենէ  
տաճկացած Յակոբ էմին՝ որ 360 լու-  
րուշ պարտք ունի եղեր՝ տալ խոստա-  
ցան ու զինքը ձանքեցին. Անցի Պ.

# ԱՐԵՀԱՏՈՒՅՆ

ԴՐԱΜՈՅ ԱՐԺՈՂՈՒԹԻՒՆԸ		
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՆ	ՀԵՆԴՀԲ.	ՈՐՐԱԹ
23 ԴԵԿԵMBER	24	22
	ԴՐԱՄՈՅ	ԴՐԱՄՈՅ
Օսմանեան լիրա Մէճ	104	104
Քսաննոց արծաթ		
Խսհամբ ռումինիէ	35. <sup>25</sup>	33. <sup>25</sup>

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼԻՍ	23	ԴԵԿԸՑԵՄԲԵՐ
Ա. Ր Մ Տ Ւ Ք		
Ցորեն թայղան կարծր	42—43	
» Խամայիլ »	42—43	
» Բռւմ. Պաշչըք	35—36	
» Վառնա	36—37	
» Խորայիլ կակուդ	37—38	
» Կալաց »	35—37	
» Պուրկաղ »	38—39	
Եղիպտացորեն կալաց	19—20	
	19	19

Մ Ե Տ Ա Գ Ա	—
Պուրսա կարճ թէֆէ	610 —
» երկան »	20
Եաքի հօլիան Փրամնք	48 —
» Պառենասան Փրանք	60

Պանուելին քովէն ալ 150 դուրսուշ  
ելեր է, կրկն իրեն տուին: Հարսեղին  
ստակն ալ տուին, և նշանուած ըլլա-  
լուն համար նշանածին տունը զրկեցին:  
Եվբեկցի Մելքոնը ժաման սենետիը  
պահեցին քովէն ելածները իրեն չտա-  
լով, թէ և Մելքոնը ստակները և կո-  
րասիներն իմա է ըսելով կը սիդէր:

Խաչ հետաքրքիլ ժողովություն՝ ա-  
սոնց բռնի և յանկարծ գուրս ենել-  
նուն փրայ և արդէն վանքին փրայ ալ  
կասկածներ ունենալով՝ սկսան շուկան  
կամ սրճարանները ասոնց հարցութիորձ  
ընել և վանքին փրայ տեղեկութիւնառ-  
նել։ Եթէ ասոնց ըստածները մի առ մի  
գրի տանելու ըլլամք՝ բազումթերթեր  
չեն բաւեր։ Վանքերնուս մէջ այնպիսի  
գէշութիւններ կը պատեին, որոց շե-  
տակը խօսելով հաւատալիս չեր գտր,  
յիշեալ Խմբւէկցիները, նախ Մելքոնը,  
ենանաֆի զլիուորներէն Ալթունեան  
Յարութիւն աղայի, Թնակեան Յօ-  
հաննէս աղայի, Դանիէլեան Մ. Յօ-  
հաննէս աղայի, և Անդրանիկի է Ֆէն-  
տիի առջե մի ըստ միոջէ պատեց վան-  
քին մէջ անցած գէշութիւնները և ըս-  
տորագրութեամբ վաւերացուց պա-  
տասխանառու եմ ըսելով։ Հետպհետէ  
ուրիշներն ալ կրկն կրկն քննեցին  
նայեցան որ իր խօսքին փրայ հաստատ

կեցած էր և կը պատասխանէր թէ որ  
և իցէ գատաստանի տաջեւ դրածներս  
և բաժներս կարող եմ հաստատելու .  
ապա Դվյէրէ կցի Բարսեղին հարցուե-  
լով, նա ալ ՄԵԼքոնին պատմածներուն  
վրայ ինչ ինչ բաներ տեսած ըլլալը յայտ-  
նելով պատմեց, որոց նկարագրութիւն-  
ները մեզի ամօթ կը համարինք գրել . . .  
և ստորագրեց ալ . 'Ի վերջո՛ ՇՀԿնցի  
Պ. Մանուկելին ալ կանչուեցաւ, որով-  
հետեւ այն ալ վանքին մէջ ժամանակ  
մը կեցած էր . ան ալ ըստ թէ, ես  
այս եղած պատմութիւններին շատ քի-  
չը տեսած եմ, բայց վանքին միաբան-  
ներէն թէ՛ներկայներէն թէ՛ ելլողներէն  
և թէ՛ վանքին մէջ գործակալութեամբ  
մռնող ելլողներէն լսած եմ և ինձի  
հաստատած են այս եղածները, հետե-  
ւաբար տառնց խօսքին կատալեալ վստա-  
հութիւն չընելով հինգ վեց հետապրը-  
քիր անձինք լինեց կողմանէ վանքին  
ՊԵռպէալին արժանահաւատ մէկը զօր-  
կեցին որ քննէ և եղելութիւնը լինեց  
պատմէ, որուն խօսքը այս է . « Ինչ որ  
այդ տղաքը կը պատմեն, բոլոն ալ ճշշ-  
մարիտ է ո և ապա քահանացի մ'անուն  
տուին, որ խիստ գայթակղելի անցքի  
մը նկարագրութիւնը կըներ . . . .  
Եւ հետեւաբար թէ միաբաններէն և  
թէ վանքին հետ ուրիշ յարարելու-  
թիւն ունեցող պատուաւոր անձերէ  
ստուգելով՝ և հմաւը բժշկներէն աե-  
ղեկանալով ստորագրութիւն, առնուած

ՆԵՐՔԻՆ ԲԵՐՔ

	Պամպակ	Պալըքէսէր	Հօխայ	Դուբուշ
»	Կէրլէ	»	8 — 8 <sub>20</sub>	— 9 <sub>20</sub>
»	Ատանա	»	— 6 <sub>20</sub>	6 — 6 <sub>20</sub>
»	Ուստաստան	»	6 — 6 <sub>20</sub>	10 — 12
Բուրդ	Ենկիւրիլուացուած	»	— 5 <sub>20</sub>	»
»	» Հլուածառուծ	»	6 — 7	— 14
»	Պանտըրմա Հլուաց.	»	8 — 9 <sub>20</sub>	8 — 10
Ճէյրի	Լնկիւրիւ	»	— 10	»
»	Թողարատ	»	— 12	»
»	Չորում	»	6 — 7	— 29
Մազը	սեւ	»	225 — 230	26 — 28
»	Ճերմակ	»	13 — 15	13 — 15
Թիֆթիք	Լնկիւրիւ	»	25 — 26	— 24
ԱֆիօնՊալըքէսէր	»	»	— 4 <sub>20</sub>	36 — 40
Քիթրէ	Տերեւ բանուած	»	— 8	— 9
Սալէպ	Տաճկաստանի	»	— 3 <sub>20</sub>	— 3 <sub>20</sub>
Մերդամուժեղին Տրապի	»	»	— 4	»
»	Անատօլու	»	»	»
Սուսամ Թումէլիի	»	»	»	»
Կտաւատի	հունա Թում. Քիլէ	»	»	»
»	» Պանտըրմա	»	»	»
Զէթ Այվալըդ	հօխայ	»	»	»
»	Կիրիստ	»	»	»
Աձառ (Սապօն)	Գանտիա	»	»	»
»	Միտիլի	»	»	»
Բրինձ	Եղիպտոս Ծէշիտ	»	»	»
»	Տիմեաթ	»	»	»

Ե , և ոմանցմէ ալ միայն խօսք առնը-  
ւած է որ պէտք եղած ատեն իրենց վը-  
կայութիւնը տալու պատրաստ են շա-  
տերու առջեւ , և նոյն ստորագրութիւն-  
ները միարանից արդէն պատմածները  
կը հաստատեն . եթէ քննիչ ժողով մը  
ըլլայ , թէ՝ այս պատմութիւնները , թէ՝  
ստորագրութիւնները և կամ թէ ստո-  
րագրութեան տէրերը պատրաստ են մի  
առ մի պատմել և ստուգութիւնը ցու-  
ցընելու . բայց դժբաղդարար մինչև հի-  
մա ատանկ ժողով մը տեղի չունեցաւ .  
թէ և ուզուեցաւ որ այդ ժողովը եկե-  
ղեցւոյն սենեակը ըլլայ , և երկու կող-  
մանէ անձնիներ ընտրուեցան , բայց չե-  
դիսցու իր թէ ի՞նչ պատճառաւ մէկ  
քանի անձանց գէմ կենալըվը այդ ժո-  
ղովը չըրին և ընել չուզեցին , այլ յան-  
կարծ Անդրանիկը զօպարախէ Ե ըսելով  
մահօնքագրութիւն մը բացին , որուն  
մէջ հաղիւ հինգ վեց հոգի յօժարու-  
թեամբ ստորագրութիւն դրած են ,  
շատերէն բռնի առին և շատերուն ալ  
վերոյգբեալը կարդալ չուպով միայն մէօ-  
հիւրդ կօխէ ըսելով ստորագրել առ ին ,  
մանաւանդ կղերական գասուն երկիւղ  
տալով իրենց խղճին գէմ ստորագրել ար-  
ուելին .

իրաւունքը ունի՞ն թէ ոչ . կամ թերեւս  
այս խօսքերը սուտ և զրագրառութիւն  
էին ըսելով տղիտութեամբ յամառողը  
ներն ու պնդաղները իրաւունքը ունենան .  
երանի թէ սուտ ըլլային , զրագրառու-  
թիւն եղած ըլլային , բայց ցաւօք որտի  
կըսեմք որ շատերը լաւ ստուգած և  
համոզուած ըլլալնուն համար մեծապէս  
դայթակղած են .

Դուք ալ , եթէ ուզէք կլնաք մի  
առ մի իմանալ , մենք այս անգամ չու-  
զեցինք մանրաման պատմութիւնն ը-  
նել ուզէս զի ուսնց անունը չնախատ-  
ուի , և հետեւբար քաղաքնուս և ազ-  
գերնուս պատիւը բոլորովին չբամբառուի .

Ա երոյգբեալներուն ճշգութեան  
վկայեմք . (Ստորագրութիւնք)

---

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

‘ՆՈՐ ՏԵՇԻ’  
ԵՒ

ՄՏԱԿՈՐԱԿԱՆ ՄՆՈՒՆԴ ՏՂԱՅՈՑ  
Ս . ԲԱՐՍԵՂ . Գ . ԱՅԱԶՄԱՆԵԱՆ

Գեղեցիկ ու օգտակար խրատներ  
պարունակող գրքոյի մ'է՝ պատուելի  
վարժապեատց կողմանէ տպայոց կա-  
զանդչեալց ըլլալու նպաստիւ յօրին-

Արդ մինչեւ որ պաշտօնական կերպիւ ժողովը ըլլայ, այս եղելութեանց Ճշմարտութիւնները երեան չպիտի ելլայ, և այն ժամանակը պիտի հասկցութիւնը այս խօսքերը ըստները և լսողները և կամիրենց բարեկամներուն գրողները

*Journal of Health Politics, Policy and Law*, Vol. 28, No. 4, December 2003  
ISSN 0361-6878 • 10.1215/03616878-28-4 © 2003 by The University of Chicago

## ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

**Հայտղի գեղականուաց ամենէն երևելներէն մէկը հանրածանօթ Պ.**  
**Ա. Օռաննի, որ գեղագործութեան արհեստաը Եւրոպա սովորած, և 16 տա-**  
**րիէ ՚ի վեր Աբրա Աղաճամին 67 թիւ գեղարանը բանեցընելով, թէ գեղերուն**  
**ընտրութեամբն ու մաքրութեամբը, թէ զգուշաւոր խնամօքը, և թէ զինե-**  
**րուն արժանութեամբ իր անթիւ յաճախորդները գոհ ըրած է.**

խը Խթմիապին գիմացը Բարձր . Ա ալիտէ Սուլթանին շնորհած կալուածներէն 7 և 8 թիւ իրարու կից մաղաղաները բանելով , մէկուն մէջ նոր գեղարան մ’ալ հաստատած , և վրան արեգական շքել պատկերով զարդարած , միւսն ալ ամեն տեսակ գեղզորեից և բժշկական նիւթոյ մթերանոց ըրած է . Այս կրկին խանութներուն մէջ գանուած ամեն տեսակ գեղերն Եւ բովիոյ ամենէն երեւելի գործարաններէն բերել տրուած՝ վերջին աստիճան արժան զնով կը ծախուին . Ամեն տեսակ քիմիական և ուրիշ գեղեր ամբողջ և անպահաս կը գտնուին . ամեն տեսակ հանքային ջուրեր ամեն 15 օրն անդամ մը նոր բերել կը արուին , հետեւաբար միշտ թարմ են . նմանապէս բուն “ Կոր վէկիոյ անարատ և զուտ ձկան խղեր՝ Եւրոպայէն շիշերով եկածներուն ամենէն գերազանց և բնոտիր՝ հօսայով և խիստ արժան գնով կը ծախուին .

Յիշեալ գեղարանին մէջ նուև հասարակութեան պիտոյից համար գլխաւոր և մանաւանդ ազգպային վարպետ բժիշկներ ամեն ժամանակ պատրաստ կը գտնուին . Գիշերուան ո՞ր ժամնեն որ ըլլայ՝ կը բացուի . և սառ չփանուած առեն՝ միշտ մեքենայով կը շինուի և պատրաստ կը գտնուի հիւանդաց համար . Ասոնցմէ զատ ո՞ր բաժիշկն որ փնտուուի , յիշեալ գեղարանին միջոցաւ կրնայ շուտով գտնուիլ :

ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐՔ

Խամակէ Ռիո եւ Գալիֆօ	400	հօմ.	900—880
Շաք · գլուխ6-10լ.տ.կնդ.	»	»	—
» Փոշի	»	»	226—
» Հող · գլուխ	»	»	280—283
» Փոշի	»	»	226—228
Գաղթ. գլուխ	»	»	280—285
» Փոշի	»	»	222—224
Անադ (գլաւյ)	»	»	700—710
Պղպեկ (պինդէռ)	»	հօխայ	5—10—
Լեղակ (չիվիս)	»	Պէնկալա	125—130
» » Սատրաս	»	—	75
Անուշաղը (Նոշատը)	»	—	610
Պղպասա (Զէլիք)	անուուկ	—	165—180
Կապար (Գուրցուն)	»	—	310
Թիլթեկ (Թէնէքէ) ղոյդ անու.	»	—	315—320
Զինք տախտակ թիւ 7-12 Հիս	»	—	520
Երկաթ Անդ. ձողաձեւ կոդ.	»	—	72—73
» Տախտակ 4-14	»	—	100
» Բեւեցու	»	—	72—74
» Բոլորակ	»	—	135—140
» Ուռւսիոյ	»	—	120—130
Քարֆիձա Վարդի	39 Հիս.	—	95—142
Խւսթիւպէճ Ճէն. ղոյդ Սնտ.	»	—	250
» Պէլճ.	»	—	
» Թրիէսթ	»	—	
Աբառմաչէթ Վիէննա հօխան	»	—	15
» Թրիէստ եւ Գալլ.	»	—	14

Մասիս լրագրոյ բաժանորդագրութեան  
տեղերն են կ. Գոլիս Զինիվիլի խանը վերի  
յարկը թիւ 7 Մասիսի խմբագրատունը

Իսկ գաւառուց մէջ հետեւեալ հոդա-  
բարձուաց սինեակիները  
ԽԶՄԻՐ. Յարութիւն աղա Տէտէեան .

Նիկուրիդիս . Խորով աղա թ . Էսկի-  
ճեան .

ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼԵՍ. Մ . Սուքիսս աղա  
Գայուստեան :

ԿԱՐԻՆ . Կարապետ պատուելի Զա-  
քարեան .

ԵԱՀ. Մ. աղաս Խաչիկեան .  
ՀԱԼԻՊ. Նիկողայոս աղա | Տէր Մար-  
դարեան .  
Կօհէ Խաջ. Զ. Շեմասիւնա Օւհճ պահ

ԵՐԵՎԱՅ. [Նախեցասկիրաց Խանգարան  
ՎԱՆ. Գրիգոր աղա Խասճանեան .  
Ուրիշ քաղաքներէ ստորագրուիլ ու-  
ղողներն այս տեղերէն մէկուն հետ Կրիստ  
թղթակցիլ

Խմբագիր-Տնօրեն  
Կ. Ա. Իհթիհեծսան

**ԽԱՂԱԳԻՐ-ՏՆՈՐԵՆ**

ԵՐԱ ՍԱՐՈՒ ԼՐԱԴՐԱՆ  
ՀԻՄ ԶԻՆՈՒՅԻՆ ԽԱՆ